ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

22 փետրվարի 2011 թվականի թիվ 7-Ա

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 77.2 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի փետրվարի 21-ի թիվ 01/15/927-11 հանձնարարականը՝

կարգադրում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզի համայնքներում 2011 թվականին իրականացնել վարչական հսկողություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 20 հրամանով հաստատված ժամանակացույցի:
2. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և առանձին բաժինների պետերին.
   1) համայնքներում վարչական հսկողությունը պատշաճ կերպով իրականացնելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին ներկայացնել ուսումնասիրության հարցաշարերը
   2) իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկանքը եռօրյա ժամկետում ներկայացնել մարզպետին
   3) վարչական հսկողության ընթացքում արձանագրված թերությունների վերացման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել յուրաքանչյուր եռամսյակի վերջին տասնօրյակում:
3. Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարությանը. յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հ.Ավալյանի վրա:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

22 փետրվարի 2011 թվական
ք.Իջևան